

Ո որ պատահէր ի պաշտօնակալաց և աստիւ
ձանաւորաց Առաջ ի ձանագարչին, Հրամիրէր
առ ինքն առնել նախաձաշիկս և ամենեթին ըն-
դունէին զառաջարկութիւն նորա. այլ յաւուր
միում ի մենամարտութիւն մտեալ կորուսանէ
զկեանու Սա ընկերակցաքն իւրովք նոտի առ
ձանագարչաւ Տիփիսոյ, և ի նմին ժամանակի
անցանէ ընդ այն աղնուական ուն Խմբեթացի
ծառափի իւրավ. Արսէն հրաւիրէ զնա ի նախա-
ձաշիկս, այլ միւսն մերժէ ասելով թէ կարեոր
գործս ունիմ. իրեւ նոյն հեռանայ փոքր ինչ,
ասեն ընկերքն ցԵրսէն. “մի՛թէ հաւատաս գու
թէ գործս ունէր նա, ոչ, այլ զի Խղճէր ըմպել
ընդ քեզ զզինի,,,” “մի՛թէ,, հարցանէ. “այս,,
պատասխանեն. և աչա անդէն նոտեալ ի ձի եր-
թայ հասանէ նմա, և վերստին հրաւիրէ. և ի
շանսալ նորա՝ երկոքին ևս մերկեալ զուտսերս
մուանեն կատաղբարի ի պատերազմ. Խմբեթա-
ցին երկիցս առնու վերս. իսկ Արսէն անվաս
մայ տակաւին. յայնժամ դառնայ առաջինն առ
ծառայն իւր և ասէ զայրացմամբ, “Ի՞ր ժուժէ
միրո քո տեսանել զմահ տեսանդ յօտարէն,,
յայնժամ ուղղեալ ծառային զըրացանն դէպ
Արսէն սպանանէ զնա ի տեղւոջն.

(Ն-Դ-Հ-Հ-Հ-Հ-Հ)

ԱՐԵՍՏԱԿԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԵԴՐԱԿԱՆ

ԲԱՆԱԿԱՐԱԿԱՆ

ԱԿՐԵՆԵԿԵՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

ՔՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒԱՌԵԱՆԵՐԻ.

(Ն-Դ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ)

Զ.

ՕՇ հոսումը.

Մենք զիանենք որ մարմինները տաքա-
նալու միջոցին լայնանում են: Այդ պատ-
ճառով եթէ առնենք մեկ խորանարդ ոտ-
նաշափ երկաթ և սկսենք տաքացնել, նո-

րա ծաւալը կը մեծանայ: Երկաթի մաս-
ները կսկսին հեռանալ մինը միւսից և ա-
ւելի մեծ տեղ կը բռնեն, քան թէ մի խո-
րանարդ ոտնաշափը: Այդ պատճառով
մեկ խորանարդ ոտնաշափ տաքացրած եր-
կաթի մասները փոքր կը լինին: Ուրեմն
երբ որ մի խորանարդ ոտնաշափ պաղ եր-
կաթը տաքացնում ենք, նա սկսում է թէ-
թեանալ:

Ա եր առնենք մեկ կլոր յատակով լայն
աման, և նորա մեջ ջուր ածենք: Յեայ
այդ ջրի մեջն ածենք փոքր ինչ փայտի սը-
ղոցուածք և սկսենք վարի կողմից տաքաց-
նել: Մենք կը նկատենք որ փայտի վըշ-
րունքները սկսում են շարժել ամանի
մջ, մջ տեղովք բարձրանում և կողքեր-
քով վար իջնում: Խնչուէ այդպէս լիջնում:

Գուրը վատ հաղորդողներից է, այդ
պատճառով երբ որ սկսում ենք տաքաց-
նել, ջրի այն մասերն են տաքանում, ո-
րոնք զիալում են ամանի յատակին: Տա-
քանալուց ջրի մասները սկսում են լայնա-
նալ և թեթեանալ. վերայի եղած պաղ
մասները ծանր լինելով վար են իջնում
և բարձրացնում թեթեաներին: Այս կեր-
պով վերեի պաղ մասները անդադար
վար են իջնում տաքանում կրկին բարձ-
րանում և նրանց տեղ բռնում են նորէն
պաղ մասները: Այդ նկատելը շատ հեշտ
է, եթէ ուշ գարձնենք փայտի վշրունք-
ների շարժմանը, նոցա վայր ու վեր լինե-
լուն: Որովհետեւ ամանի յատակի միջին
մասն է տաքանում, այդ պատճառով, այդ
ուղղութեամբն էլ ջրի մասերն են տաքա.
նում և բարձրանում, իսկ կողքերիցը
ցածրանում են դէպի յատակը ջրի պաղ
մասները:

Խսկ եթէ սկսենք հեղուկ մարմինները
պաղեցնել, նոցա ծաւալը աստիճանաբար
կը վոքրանայ և նոքա կը ծանրանան:
Վերջապէս հեղուկ մարմինները կը դառնան
հաստատուն մարմիններ, և այն ժամանակ մէկ խորանարդ ոտնաչափ հաստատուն մարմինը աւելի ծանր կը լինի, քան
թէ մի ենոյն մարմինի մէկ խորանարդ ոտնաչափ հեղուկը: Եթէ հալած կապարի մէջ ձգենք մի կտոր պիտի կապար, խոյն տակը կ'ընկնի (կը սուռզուի): Բայց ձմեռը մենք աւեսենում ենք որ սառոյցը լողում է ջրի երեսին: Եյդ նորանից է յառաջ դարձու, որ սառոյցը թեթև է ջրից:

Երբ որ տաքացնում ենք մի խորանարդ ոտնաչափ օդը, նորա մասները լայնանում են և այդ ժամանակ մէկ խորանարդ ոտնաչափ ասքացրած օդի մէջ քիչ մասներ կլինին քան թէ պաղ օդի մէջ: Եյդ պատճառով մէկ խորանարդ ոտնաչափ տաքացրած օդը՝ թեթև կը լինի մէկ խորանարդ ոտնաչափ պաղ օդից: Համարենք որ սենեակի առաստաղի մօտ ժողովուել է պաղ օդ, իսկ ցածրումը, յատակի մօտ՝ տաք: Երբ որ այդպէս լինի, ի՞նչ յառաջ կը գայ: Պաղ օդը ծանր լինելով ցած կիջնի յատակի վերայ և այն աեղից վեր կը ըմբկ տաք օդը, որ և կուսի բարձրանալ գէպի առաստաղը: Հէնց այսպէս էլ լինում է միշտ: Կարելի է որ ամենքն էլ նկատած լինին, որ ճանձերը առաստաղի վերայ նստելը չափաղանց սիրում են, պատճառ, այն տեղ տաք է յատակից: Փոքր ինչ բաց անենք մեր սենեակի, դուռը գէպի նախասենեակը և մօտեցնենք վառած մոմը բացուածքի վերի մասնին, բոցը կը թեքուի գէպի մեր նախասենեակի ներսերը: Ինչո՞ւ համար է

այդպէս լինում: Պաղ օդը ծանր լինելով պիտի ներս հոսի դուռ վարի կողմից, ինչ տաք օդը թեթև լինելով՝ պիտի բարձրանայ անշուշտ և դուրս երթայ դրան վերի կողմից: Եթէ դուռը բաց թողնենք՝ օդի այդ աեսակ հոսելը կը շարունակուի, մինչ երկոքին սենեակների օդի բարեխառնութիւնը կը հաւասարի իրարու:

Ինչպէս է այրպում փայտը վառարանի մէջ. փայտը վառարանի դռնովը դարսում են նորա խորունկացրած տեղը, ինչ տեղից վերև է բարձրանում վառարանի ծխնելոյզը մի քանի տեղ ծրամըուելով և դուրս է գալիս տանիքի վերայ: Երբ որ փայտը վառում են, վառարանի օդը տաքանալով բարձրանում է ծխնելոյզի միջով և տաքացնում է վառարանը, իսկ նորա տեղը բռնում է սենեակի պաղ օդը, որ նոյնպէս տաքանալով բարձրանում է ծխնելոյզովը: Տաք օդը տանում է իւր հետ փայտի ջրային գուլորշեկները և ածխի մասները՝ կազմելով ծուխ, որից մասամբ ծխնելուզի պատերին նստելով դառնում է մուր: Ծխնելոյզը նորա համար են մի քանի տեղ ծռմուռմ, որ տաքացած օդը ուշ դուրս երթայ և աւելի տաքացնէ վառարանը:

Վառարանների տաքացնելը, (բացի այն որ այդպէսով տաքացնում ենք սենեակները) մեզ մի ուրիշ օգուտ էլ է տալիս: Կամ մաքրում է սենեակի օդը: Ունեակի օդը դուրս է գալիս վառարանի միջովը, և նորա տեղ պատուհանների և դռների ծեղքերից և ուրիշ տեղերից ներս է դալիս մաքրու օդ, և այդ շատ կարեւոր է մարդոց համար: Փակուած օդը շատ մնասակար է առողջութեան համար և անշուշտ

հարկաւորէ, որ զոնէ օրը մի անգամ ներս
թողնուի նոր օդ:

Աենեակի օդը տաքանում է հետեւել
կերպով: Վառարանի տաքացած պատե-
րը իրանց տաքութիւնը հաղորդում են
շրջակայ օդին, որ խակոյն բարձրանալով՝
իւր տեղը տալիս է նոր օդի մասների, օդի
այս տեսակ շարժմունքը շարունակվում է
մինչև սենեակի բոլոր օդը ստանում է միա-
հաւասար բարեխառնութիւն:

Ե՞նչ է քամին: Քամին յառաջ է, գա-
լիս օդի շարժմունքից: Օ՞ղը ինչու համար
է շարժում: Երբ որ գուան վերայ փորձ
ենք անում, մենք տեսանք որ օդի շար-
ժում յառաջ եկաւ, այս ինքն փոքրիկ
քամի յառաջացաւ վարի կողմից՝ պաղ,
վերի կողմից՝ տաք: Վ.յդ յառաջ եկաւ
նորանից, որ երկոքին սենեակները միա-
հաւասար չեն տաքացրած: Ինյոց ինչ-
պէս է տաքանում օդը, եթէ նա վաս
հաղորդող է: Երեքակի ճառագայթ-
ները անցնում են օդի միջով՝ և չեն տա-
քացնում նորան, բայց եթէ մեկ տեղ եր-
կիրը առելի է տաքանում քան թէ մի ու-
րիշ տեղ, առաջին տեղումը օդի վարի
մասները տաքացած՝ երկիրն զիալելով՝
իրանք ել են տաքանում, և այդ պատ-
ճառով բարձրանում են, երկողութ տեղից
նոր օդ է գալիս առաջին տեղը և դար-
ձեալ տաքանում և այս այսպիսի անհա-
ւասարաշատ տաքանալուց յառաջ է գա-
լիս օդի շարժումը, այս ինքն քամին:

Եւացուն, հալուն և լուսացուն:

Երբ որ ջուրը տաքացնում ենք, սկզբ-
բումը նորանից գուրս են վաղում փոք-

րիկ պղպջակներ, որոնք ջրի երեսին, հաս-
նելով պայթում են: Դոքա ջրի մէջ ե-
ղած օդի պղպջակներն են: Յետոյ ամանի
յատակումն երեսումն մեծ մեծ պղպջակ-
ներ, դոքա նմանապէս պայթում են, բայց
գեռ չը հասած ջրի երեսին: Վ.յդ ել
ջուրն է, որն որ տաքութիւնից շողիա-
նում է: Վ.յդ պղպջակները բարձրանալիս
հանդիպում են ջրի պաղ մասներին, այդ
տեղ կրկին պաղում են և վերափոխում
հեղուկ ջրութեան: Բայց երբ որ բոլոր
հեղուկը տաքանում է, այնուհետեւ աւե-
լի և աւելի են բարձրանում ջրային շողի-
ներ, բոլոր հեղուկը սկսում է շարժել և
պղպջակները համում են ջրի երեսին և
այն տեղ պայթում: Տաքացած հեղուկի
այս տեսակ շարժումը, որ յառաջ է գա-
լիս շողիներ կազմուելուց, ասվում է Ե-
ւացուն: Եռ գալուց առաջ ջրի մէջ
լիմում է թշուն, այդ յառաջ է գալիս
նորանից, որ գոլորշեկ բարձրացող պղպ-
ջակները սկայթում են վերևի տաքացած
մասներումը, և ջրի հեղուկ մասները ի-
րար են դարկվում: Որքան երկարատեւ լի-
նի ջրի եռացումը, այնքան առաւել ջուր
կը շողիանայ և այնքան շուտ կը քիչանայ
հեղուկը ամանի մէջ:

Մենք գիտենք, որ ջուրը եռ է գալիս,
երբ նորա բարեխառնութիւնը լինում է
 80° Ռ., կամ 100° Ա.: Ինյոց բոլոր հե-
ղուկները մի և նոյն բարեխառնութեան
մէջ չեն եռ գալիս: Ան որ աւելի քիչ
բարեխառնութեան մէջ են եռ գալիս,
կան որ շատ: Վ.յապէս զինու ողին եռ
է գալիս 64° Ռ. մնդիկը 280° Ռ. հալած
ծծումը 320° Ռ: Մինչև անդամ կան
այնպիսի հեղուկներ ել, որ եռ են գա-

լես զրօյից ցածը բարեխառնութեան
մէջ :

Մետաղները և ուրիշ հաստատուն
մարմինները տաքացնելու ժամանակի հե-
ղուկ են դառնում, այս ինքն հալվում
են: Օրինակ՝ սառոցը դառնում է ջուր,
ծծումբը, կապարը դառնում են հեղուկ: **Մետաղներն** ևս մի և նոյն բարեխառնու-
թեան մէջ չեն հալվում, օրինակ
Սառոցը 0° Բ, կապարը 264
Շարպը 30 Երծաթը 800
Մեղրամումը 50 Պղինձը 840
Կծումբը 88 Ուկին 960
Ենազը 184 Երկաթը 1280

Մինչեւ այսօր չեն կարողացել հալել

միայն ածուխը, սակայն մօտ ժամանակ-

ներս կարողացել են փոքր ինչ վասփկա-

ցնել:

Հեղուկները սակաւ բարեխառնութեան
մէջ էլ են շոգիանում: **Մի փոքր ամանի**
մէջ ջուր ածենք և դնենք սեղանի վերայ,
ջրի քանակութիւնը հետ զիետէ կսկսի
նուազել, այնպէս որ՝ մի առժամանակից
յետոյ բոլորն կանչեանայ: **Բայց**
ուր կանչետանայ կամ ի՞նչ կը դառնայ:
Կա չեր կարող ամանի միջով անցնել,
պատճառ՝ ամանը կոտրուած չեր: **Աւելին**
պէտք է ածենք, որ այս տեղ մի և նոյն
է յառաջ գալիս, ինչ որ եռացման ժա-
մանակի ջուրը դառնում է շոգիներ, որ-
ոնք բարձրանալով լողում են օդի մէջ:
Բայց այս դիպուածումը մենք չենք տես-
նում որ ջուրը եռ գալիս լինի, պատճառ,
նա ուշ է շոգիանում և մի և նոյն ժա-
մանակ եռացման բարեխառնութիւնից
պէտք բարեխառնութեան մէջ: **Հե-**
ղուկի այսպէս դանդաղապէս շոգիների

փոխարկուելը ասվում է՝ լոդիացոնն կամ
Դուրիշնաւ:

Մի և նոյն քանակութեամբ ջուրը որ
տեղ աւելի շուտ կը շոգիանայ, սրուակի,
թէ ափսէի (թէփշու) մէջ: Յայտնի բան է
թէփշու մէջ: **Արուակի մէջ հեղուկը ուշ**
է շոգիանում, պատճառ՝ նորա բաց երե-
սը փոքր է և միանգամբց շատ քիչ ջուր
է շոգիանում, բայց սորա հակառակ,
թէփշու երեսը մեծ է և միանգամով շատ
ջուր է շոգիանում: Դիզած խոտը ուշ է
չորանում, քան թէ փուռած խոտը: **Այդ**
պատճառով ահա որքան մեծ է շոգիա-
նալու երեսը, այնքան նա շուտ է շոգիա-
նում:

Բայց ինչո՞ւ համար բաց օդում փոած
լուացքը շուտ է չորանում, իսկ սենեա-
կումը՝ ուշ: **Ամենահասարակ պատճա-**
ռով: Վասփին անգագար խումը է շոգիա-
ցող ջուրը և հեռացնում իւր հետ, քա-
մու հետեւեալ մասները մի և նոյն են ա-
նում, այնպէս որ ջուրը այստեղ շոգիա-
նում է աւելի արագ, քան թէ սենեակու-
մը, ուր քամի չկայ: **Անենեակումը չորա-**
ցնելու ժամանակ փուռածքի վերայ պը-
տը լուացքը են ջրային շոգիները և թոյլ
չեն տալիս շուտով ցամաքելու, այդ պատ-
ճառով եթէ կամենում ենք, որ սենեա-
կումը լուացքը շուտով չորանայ, պէտք
է փունք թափանցիկ օդի դիմացը: **Ան-**
տառի մէջ խոտը մնում է խոնաւ, մինչ-
դեռ մի և նոյն ժամանակ դաշտի վերայ
բոլորովին չոր է: **Այդ նորանից է,** որ ծա-
ռերի տերեները ներս չեն թողնում արե-
գակի ճառագայթները, քամին էլ չի կա-
րողանում խաղալ անտառի խտութեան
մէջ: **Տղմոտ փողոցները քամի եղած օրե-**

ըր աւելի շուտ են ցամաքում, քանի թէ հանգարա օրերը Փչելով՝ մենք հովացնում ենք տաք կերակուրը:

Տայց հեղուկ մարմինները չեն միայն, որ շողիանում են. դորան ենթարկուած են և հաստատուն մարմինները, ինչպէս սառոցը: Եթէ մի բաց տեղ տառուցի կտոր զնենք, փոքր եամանակից յետոյ նորա ծանրութիւնը կը պակասի: Ասոած կտաւիքը չորանում են ամենացուրս օրը անգամ: Յայտնի է, որ մի քանի լեռների գագաթները դարերից սկսեալ ծածկուած են ձիւնով՝ եթէ նոցա վերայ շողիացում չը լիներ, այդ ձիւները պիտի հասնեն ահազին բարձրութեան: Այս մի և նոյն է, յառաջ գալիս և բոլոր հոտ բուրող մարմինների մէջ:

Եյն հեղուկները որոնք շուտով են շողիանում՝ ասվում են՝ ջնդական, իսկ որոնք խիստ գանգաղ կերպով են շողիանում, կամ ամենեին չեն շողիանում, ասվում են անցնդական: Գինու ոգին աւելի ցնդական է, քան թէ ջուրը. Ջուրը աւելի շուտ է շողիանում: Քան թէ սնդիմիլը: Տաւական մարմիններից շատերը, օրինակ՝ վուշի, մեկոնի, կանեփի իւղերը շողիանում են, թանձրանում են և պնդանում, միւսները, ինչպէս են՝ արեածաղիի, նուշի և ձիթապաւղի իւղերը ցնդական չեն: Եռաջին իւղերը ասվում են՝ ջրացու իսկ վերջինները — ու շրացու:

Ուքան բարձր է բարեխառնութիւնը, այնքան շողիացումը լինում է աւելի արագ, երկրի երեսին ամենասակաւ շողիացումը լինում է ձմեռ, գարունը աւելանում է, արտգաղիս, և ամենաշատու-

թեան է հանում ամառը, իսկ աշունքը սկսում է կրկին նուազիլ:

Եթէ մատներս թաթախենք ջրի մէջ և յետոյ բանենք օդումը՝ նոքա կական մրսել, (ինչպէս լողալու ժամանակ, որ ջրի մէջ չենք մրսում, բայց երբ որ դուրս ենք դալիս և թաց թաց կանգնում օդի մէջ՝ մրսում ենք): Կորա պատճառը այս է: — Ֆուրը շողիանում է մատի վերայ և յնդելով տանում է իւր հետ մատից տաքութիւն. Եթէ թաց մատներս բըռնենք քամու մէջ, այդ ժամանակ նա աւելի կը մրսի, պատճառ, այդ ժամանակ շողիացումը լինում է աւելի արագ: Այնպէս եթէ ձեռքներս գինու ոգիով թաթախենք կամ ւոֆմանեան կաթիլով, այն ժամանակ ձեռքներս աւելի կը մրսի. պատճառ՝ այդ մարմինները աւելի ցնդական են: Ծորներս թաց ժամանակ մենք աւելի ենք մրսում և ստանում ենք հարբուդն, կամ այլ հիւանդութիւն, պատճառ՝ ջուրը շողիանալով՝ մեր մարմնից տաքութիւն է տանում, այնպէս որ նորա բարեխառնութիւնը ցածրանում է: Այն իսկ պատճառով շատ վնասակար է թաց թաց շորերով՝ քնկլը, կամ թաց կտաւիք հագնելը: Եւ սորանից է որ ով շատ է քրտնում, նա աւելի քիչ է նեղանում շոքից: Ունեակին հովութիւն տալու համար, ջրջրում են յատակը: Այնպէս փողոցները ջրջրում են ամառը: Ամառան անձրել հովութիւն է տալիս օդին, պատճառ, երկրից տաքութիւն է խլում շողիանալով: Երկար ժամանակ պահուած հացը շորանում է, պատճառ, նորա մէջ եղած ջրային մասները շողիանում են: Ով որ այնպիսի վերարկու է

ծածկում, որոյ միջով խոնաւութիւնն չի անցնում, նորա շորերը ման դալու ժամանակի թացանում են: Այդ նորանից է, որ մարմնոյ քրտինքը վերարկուից չի կարողանում անցնիլ, այլ թափվում է շորերի վերայ և թաց անում:

Խոնաւ աեղիրում բարիխառնութիւնը աւելի ցածր է, քան թէ չոր տեղերում: Առաջին դէպքում ջուրը շոգիանալով պաղեցնում է երկիրը և ջրային շողիները օդի մէջ տարածուելով, նրան նոյնպէս պաղեցնում են: Երկրորդ դէպքում շողիացում չը կայ, այլ և աւազուտ լինելով՝ նորանից օդը աւելի է տաքանում:

Ըստ երկրներում սառեցնում են ջուրը, օգուտ քաղելով ջրի շողիացմանը պաղելուց: Յուրը ածում էն կաւէ կժերի մէջ*), և դնում են այնպիսի տեղ, ուր լինում է օդի յորդառատ հոսանք: Յուրը ծորելով կժի ծակատիքներով շողիանում է, դորանից կժի մէջ բարիխառնութիւնը այնքան ցածրանում է, որ մինչև սառչում է (սառուց է զառնում):

Է.

Յեւմ-նեան կանոնիլ և անոր առաջնորդիլ:

Երբ որ ձեռքներս շարժում ենք սաստիկ տաքացած վառարանին մօտիկ, տաքութիւն է դալիս մեր ձեռների վերայ:

(*) Այդ կժերին պէտք է ապակի քսուած չը լինի: Ապակին մի տեսակ խառնուրդ է, որով սովորաբ օծում են կաւեղչներին, որ լցուի նույա ծակատիքները և հեղուկները չարտաթորուին.

առքացած վառարանը իրանից տաքութիւնն է դուրս թողնում: Ո՞հ և նոյնը կարող ենք ասել և կէծացրած երկաթի և եռացրած ջրով լիքը բաժակի մասին: Թէ երկաթը և թէ բաժակը տաքութիւն կարձակեն դէպի ամեն կողմից էլ տաքութիւն կը գայ ձեռքներիս:

Արքան երկարատև լինի ձեռքներս բաժակին մօտիկ բռնելը, այնքան նոքա աւելի կը տաքանան: Բայց երբ որ բաժակի մէջ եղած ջուրը սկսի պաղել, այն ժամանակ ձեռքի զգացած տաքութիւնն էլ քիչ կը լինի: Այդ նորանից է, որ տաքացած մարմնի դուրս թողած ջերմութիւնը անցնում է դէպի պաղ մարմինը, կամ ուսումնական լեզուով ասենք, պաղ մարմինը, տաք մարմնից արձակուած ջերմութիւնը էստ է պատիս: և ինքն էլ տաքանում: Դնենք սեղանի վերայ եռացեալ ջուր, սառոյց և ուրիշ մի քանի փոքր իշատէ տաքացրած մարմիններ: Ո՞հ աժամանակից յետոյ այդ բոլոր մարմինները կը ստանան միահաւասար բարեխառնութիւն: Առաւել տաք մարմինները ինչպէս եռացեալ ջուրը՝ դուրս կը թողնի ջերմութիւն, քիչ տաքերը, ինչպէս սառոյցը, օդը և սլք կական նորան կուլ տալ:

Բայց բոլոր մարմինները միահաւասար չեն արձակում տաքութիւն: և ոչ միահաւասար կուլ տալիս: Ա եր առնենք մի այնպիսի քառանիքիւնի երկաթի արկղիկ, որոյ մէկ կողքը ծածկուած լինի մըով, երկրորդը կաւիճով, երրորդը՝ լինի ան-

հարթ, չորրորդը հաւասարապէս կաւած կոկուած։ Գորա մեջ ածենք եռցրած ջուր, և ամեն մի կողքին դնենք մի միջերմաշափ։ Մենք՝ կը նկատենք, որ փայլուն (կոկած կողմն է) և սպիտակ կողքերի դիմոց դրած ջերմաշափների սնդիկը աւելի ցածր կը լինի, քան թէ միւս ջերմաշափների։ Պորանից մենք կարող ենք եզրակացնել, որ մարմինը որքան որ անհարթ է լինում և որքան սև նորա գոյնը, այնքան նա արագ է զուրս թողնում իւր տաքութիւնը, և այդ պատճառով շուտով էլ պազում է։ Եթէ վերցնենք երկու ջերմաշափ, մէկի գնդակը մրով սեցնենք, իսկ միւսինը թողնենք փայլուն և ապա դնենք յիշեալ արկղիկի կոկուն երեսի դիմացը, կը տեսնենք, որ փայլուն զնդակով ջերմաշափի սնդիկը ցածր կը լինի սևինից։ Ուրիշն այս տեղ էս որքան որ մարմինը անհարթ լինի և գոյնը սև, այնքան նա արագ կուլ կը տոյ տաքութիւն։ Փայլուն, կոկուն և սպիտակ մարմինները չեն կուլ տալիս տաքութիւն, այլ յետ են դարձնում, կամ ինչպէս ասում դրաբառ, անդրադարձնում են։

Վերառնենք երկու միատեսակ սրուակ, մէկը պատենք սև, անփայլ թղթով, միւսը՝ ոսկեայ նրբաթերթով։ Յետոյ երկոքին սրուակները եռացեալ ջրով լցնենք և դնենք մի որ և իցէ վատ հաղորդող մարմնի, հենց ասենք, թղթի վերայ։ Այս պէս բաց օդում դրուելուց պէտք էր որ հաւասարաշափ սրուակներից պակասէր հաւասարաշափ քանակութիւն տաքութեան։ Իսայց ընդ հակառակն, եթէ միառժամանակից յետոյ ջերմաշափը ներս իշեցնենք որուակներից, կը տեսնենք որ

նոցա մեջ բարեխառնութիւնը միահաւասար չէ, սև թղթով պատած սրուակի ջուրը աւելի պաղէ միւսինից, և այդնուահար է, որ դորանից շատ տաքութիւն է դուրս գնացել։ Խոկ եթէ այդ մի և նոյն սրուակների մեջ ող ջուր ածենք և դնենք արեգակի տակ, մի առժամանակից յետոյ ջերմաշափը ցոյց կը տայ, որ սև թղթով պատած սրուակի ջուրը աւելի տաքացած է, որ ասել է թէ նա աւելի տաքութիւն է կուլ տուել։

Սորանից երևում է, որ հեղուկները փայլուն և պայծառ ամանների մեջ քիչ են պազում, քան թէ մուժ և անփայլ ամաններում, պատճառ, այս վերջնները խիստ արագ և տաստիկ են արձակում ։ Բանցից տաքութիւնը։ Ոյնպէս մոյզ և անհարթ մակերեւոյթները աւելի շատ են կլանում տաքութիւն, քան թէ պայծառները և փայլունները, որոնք անզրադարձնում են տաքութիւնը, այդ պատճառով առաջինները աւելի են տաքանում։ Ուշին՝ այն մարմինները, որոնք հեշտութեամբ են արձակում տաքութիւն, նոքան հեշտութեամբ էլ կուլ են տալիս նորան։

Երկը մայր մանելուց յետոյ երկիրը և օդի վարին մասները շուտով են պատում, քան թէ վերին։ Դորա պատճառն այն է որ՝ սև հողը ցերեկուան ստացած տաքութիւնը արձակերով աւելի արագ է պազում, իսկ այդ պազութիւնը հազարդվում է օդի վարի մասներին, որոնք դիպչում են երկիրն։ Դոյն իսկ պատճառով գարնանային սասաթիկ ցրտերի ժամանակ թուփերը աւելի են վնասվում քան թէ բարձր ծասերը։

Յուրը նոր և փայլուն կաթսաների մէջ աւելի ուշ է եռ գալիս, քան թէ այնպիսի կաթսաների մէջ, որոնք դրսեից մբուտուած են և անհարթ, պատճառ՝ առաջին անսակները անդրադարձնում են տարգութիւնը։ Չնի հալուելը շուտացնելու համար, վերան մուր են թափում։ Ամառժամանակ պայծառ պատերը աւելի ուշ են տաքանում, քան թէ մթնազոյն կամ մոյզ պատերը։ Արկաթէ վառարանները այնքան շուտ են տաքացնում սենեակները։ որքան մթնազոյն են նրանք։ Գիշերները խոտը աւելի է պաղում։ քան թէ ջուրը, պատճառ խոտը անհարթ մակերեսոյթ ունի և այդ պատճառով շուտով է արձակում իրանից տաքութիւն։ Ամառժամանակ մթնազոյն ձեռնոցներով աւելի տաքութիւն է զգացվում, քան թէ սպիտակը։

Ամառուայ շոք օրերին սովորաբար բաց գունով շորեր են հագնում, պատճառ բաց կամ պայծառ գոյները անդրադարձնում են արեգակի ճառագայթների տաքութիւնը, և դորա համար էլ այդ տեսակ շորերով այնքան շոք չի զգացվում։ Եթէ ձնի վերայ մի քանի զանազան գոյնի աղլութիւներ փունք, կը տեսնենք որ սեազոյն աղլութիւն տակ ձիւնը շուտ կը հալի, իսկ սպիտակի տակ ուշ։ Այդ գոյները հետեւալ կարգով կը լինին. սե (ամենաշատ) մանուշակագոյն, կապոյտ, մութ — կապոյտ, կանաչ, կարմիր, դեղին և սպիտակ (ամենաքիչ)։ Առանից մենք եղբակացնում ենք, որ ամառը ամենից լաւ է սպիտակ, դեղին, և կարմիր գոյնով շորեղին հագնելը. այսպիսի գոյները աւելի անդրադարձնում են և քիչ կուլ տալիս

տաքութիւն։ Չմեռ նոյնպէս լաւ է ըսպիտակ շոր հագնելը, պատճառ՝ մենք տարուայ այդ եղանակին տաքանում ենք մեր մարմնոյ սեփական տաքութեամբը, և սպիտակներն էլ չեն արձակում տաքութիւն։ Հատ կարելի է թէ, հէսյ դորա համար լինի, որ ցուրտ կողմերում բնակող կենդանիները սպիտակ բրթով են ծածկուած ու սպիտակ փետուրներով։ Ու կօշիկներով և զինարկով աւելի շոք է զգացվում, քան թէ սպիտակ և մոխրագոյն։

Ք.

Զ Ա Կ Ի.

ՕՐԻ ՀՈՆԱՌՈՒՆԵԼԸ

Պաղ սենեակի մէջ տաք ջրով մի բաժակ դնենք, բաժակի կողքերին ջրի կաթիներ կը նստեն, կամ ինչպէս ասում են՝ կը քրտնի բաժակը։ Խսկեթէ քրանած բաժակը տեղափոխենք մի տաք սենեակի ջրի կաթիները խսկոյն կանհետանան։ Տաք սենեկի մէջ, որոյ բարեխառնութիւնը հաւասար է ջրի բարեխառնութեանը, բաժակի քրանելը մենք չենք նկատում։ Ուկ լաւ քննենք, աեսնենք այդ երկութը ինչից է յառաջ գալիս։

Մենք գիտենք, որ ջուրը շոգիանում է ամեն աստիճանի բարեխառնութեան մէջ։ Արբ որ տաք ջրով բաժակը տանում ենք պաղ սենեակը, բաժակից շողիացող ջրալին շողիները գիտչելով պաղ օղին, գառնում են ջուր։ Այսպիսի ցածր բարեխառնութեան ժամանակ օղի մէջ չի կարող աեղաւորուել տաք ջրի շողիների

բոլոր քանակութիւնը. կամիմ ասել, ողը իւր բաժինն առնում է ջրային շոգիներից, իսկ մնացածը, որ ել չի կարողանում տռնել, նա է որ փոխարկվում է ջրի: Իսկ եթէ քրտնած բաժակը տաք մենեակի մէջ զնենք, նորա քրտինքը — այդ ջրային կաթիները — կանչետանան: Եյտ դիսպուածում օդի բարեխառնութիւնը բաւականին բարձր է և նորա մէջ կարող է տեղաւորուել ջրային շոգիների աւելցածը՝ որ առաջ փոխարկուեցաւ ջրի: Եյտ բարեխառնութեան ժամանակ օդը գեռ ևս չի լցուած շոգիներով, այդ է պատճառը, որ բաժակի կողքերքին նստած ջուրը կը ըկին փոխարկվում է շոգիների: Տաղնիք մէջ պատերը ծածկվում են ջրի կաթիւներով, այդ ցոյց է տալիս, որ այս ափ բարձր բարեխառնութեան մէջ ել օդը այնպէս է կշտանում շոգիներով, որ մնացածը ջուր է փոխարկվում. իսկ եթէ ջրի և օդի բարեխառնութիւնը միանման են, նոյնպէս չենք նկատում բաժակի քրանելը, պատճառ՝ այդ աստիճանի բարեխառնութեան ժամանակ, օդի մէջ կարող են տեղաւորուել բաժակի բոլոր ջրի շոգիները: Տաղց թող միայն պաղի օդը, այնուհետեւ այնպէս կը կշտանայ շոգիներով, որ մնացուքը կը փոխարկուի ջրի: Աւրեմն առաջին գիպուածում օդը կշտացած կը լինի ջրային շոգիներով, իսկ երկրորդ և երրորդ դիսպուածներումը օդի յագեցումը լինի չի լինի:

Տնութեան մէջ ել այս մի և նոյնն է յառաջ գալիս, միայն աւելի ընդարձակ կերպով: Եթէ օդի մէջ գտնվում են արդէն այնքան ջրային շոգիներ՝ որքան որ կարող են տեղաւորուել նորա մէջ, նոյն

աստիճանի բարեխառնութեան մէջ, որ ունի օդը, այդ ժամանակ մենք ասում ենք, որ նա (օդը) յագեցած է (կշտացել է): Եյդ դիսպուածում օդը ասվում է խռովակամ նաց: Այս կամ ցամաք է ասվում օդը այն ժամանակ, երբ նորա մէջ չկան այնքան ջրային շոգիներ, որքան հարկաւոր էին օդի լիուլի յագենալու համար: Եմառը օդը լինում է ամենաչոր, պատճառ՝ այդ ժամանակ թէ և աւելի շատ ջուր է շոգինանում, սակայն այդշափ շոգիները բաւական չեն լինում տաք օդը յագեցնելու համար: Որքան մօտենում ենք դէպի չմեռը, այնքան շոգիացման արագութիւնը նուազում է, բայց օդը խռովանում է, պատճառ՝ այդ միջոցներումը նորան յագենալու համար քիչ շոգիներն ել են բաւական: Եյտ մի և նոյն է լինում և օր ու գիշերուց ընթացքի մէջ: Երեգակի ծագելուց առաջ օդի բարեխառնութիւնը շատ նուազ է, ջրի շոգիացումն ես շատ պակաս է, բայց օդի խռովանութիւնը այդ միջոցին լինում է ամենաշատ: Աէսօրից յեայ մօտերկու ժամին օդի բարեխառնութիւնը լինում է ամենաբարձր, ջրի շոգիացումը նոյնպէս ամենաշատ է լինում, բայց օդը այդ միջոցին չորանում է: Որքան մօտանում ենք գիշերին, օդի բարեխառնութիւնը այնքան սառանում է և խռովանութիւնը սկսում է մեծանալ:

Օդի խռնաւ լինելը մենք կարող ենք խմանալ այն ազգեցաւթիւնից, որ նա ունի մի քանի մարմինների վերոց: Կան մարմիններ որոնք օդի թացութիւնը անյագաբար քարշում են դէպի իրանց, թրւչում են և մինչև անդամ հալվում են,

ինչպէս օրինակի համար մեր զործածու
կամ տղը այսպիսի մարմինները ասվում
են խոհառարիդուն կամ խոհառալուն
համար մարմինները ։ Ա աճառականները այս
հանդումանքից օգուտ քաղերով՝ այդպիս
սի նիւթեզէնները կշոռվ են վաճառում ։
Ե զրից մաքրուած մազերը և սեմերը խա-
նաւ տեղում երկայնանում են ։ Խափ-
սով մարմինները օրինակ, աւաղը քար-
շում է իւր մէջ խոնաւութիւն ։ Վ ծուխի
մասները ծխնելու զիմֆով ծխի հետդուրս
թռչելիս քարշում են իրանց մէջ ջրա-
յին շողիներ և իջնում երկրի վերայ, այդ
պատճառով երբ որ ծուխը հանդարս ե-
ղանակին չէ բարձրանում ինչպէս պէտք
է, այլ պըտըտփում է երկրի երեսին, այդ
ցոյց է տալիս, որ օդը սաստիկ խոնաւ է։
Գ այտեզէնները խոնաւութիւնից լայ-
նանում են, այդ պատճառով թաց եղա-
նակիներն երբեմն անկարելի է լինում դըս-
ներն ու, պատուհանները, ինչպէս պէտք
է, սփակել ու բանալ Պարա հակառակ չոր-
եղանակիներին փայտը սիմվում է, դորա-
նից է որ չոր սենեակիներում փայտէ կա-
րտոնիքները շատ անդամ ձղձղփում, կո-
րանում և ծամեփում են; Ա անեփէ պա-
րանեն երբ և թուկերը խոնաւ օդի մէջ աւե-
լիս սաստիկ են ոլորվում, և այդ պատճա-
ռով փարձանում ։
Դ րիժ ծայրը խոնաւութիւնից լայնա-
նում է; Ե զիքները խոնաւութիւնից լայ-
նանում են, իսկ չորութիւնից սիմվում ։
Վ արսակի ալեւրը խիստ շուտ է չորա-
ցնում օդը՝ երբ որ ցըլում են նորան
խոնաւ սենեակիների մէջ; ։ Չորու-
ցնում է շուտ չափութեաց առաջաց դաշտա-
կան կանաչութեաց առաջաց կառաց պար-
ագաց առաջաց առաջաց առաջաց առաջաց պար-

յութ ։ Ենան նմանք ունի երախնուց դաշ-
տական առաջաց ։ Դ համար մասնաւութիւն
է չի ունի եղինակ, նշուլ ամպ, անձրւ, յիշ և
առողջութեաց ։ Ե չունի մասնաւութիւն ։ Հ օդի մեջ միշտ գտնվում են շողիներ,
որոնք բարձրանում են երկրի երեսից;
Թաէ որը ան շատ ջուր է շողիանում ամ-
բողջ երկրի մակերեսոյթից, այդ կարելի է
նորանից հասկանալ, որ երկրի երկու եր-
րորդ գոկան մասը ծածկուած է ջրով; Ա ըս-
տո օդի բարեխառնութիւնը սկսում է ըս-
տորանալ, աւելցած ջրային շողիները
(նայելով հանգամանքներին) կազմում
են ցող, եղեամն, մշուշ, ամպեր, անձրեւ,
ձիւն և կարկուտ: Վ հնինք մի առ մի այդ
ջրային շողիների կերպարանափոխու-
թեանց ամեն մէկը առանձին: Ա կենք ցո-
ղից:
Վ թէ ամառնային պարզ և հանդարտ
գիշերը մասն գանք կանաչ խոտի վերայ,
մեր սաները կը թռչուին: Ե թէ ձեռք
դիպջնենք խոտին, կը կնկատենք, որ խո-
տը բոլորովին թաց է: Գ իշտնալու է այժմ
թէ ինչ տեղից յառաջ եկաւ այդ տեղ
ջուրը:
Ծերեկով արեգակի ծառագայթներից
սաստիկ տաքացած երկրի մակերեսոյթից
բարձրանում է ահազին քանակութիւն
շողիների, իսկ երեկոյին, արեգակնամաից
յետոյ, երբ որ երկինքը պարզ է, երկրի
մակերեսոյթը տաքութիւն է արձակում և
այդ պատճառով պաղում է: Վ յս տեսակ
պաղելուց օդը շուտով է յաղենում ջրա-
յին շողիներով՝ աւելցուկը փոխարկելով
կաթիների, որոնցից կազմվում է չօդ:
Չ օդ կազմուելու օրինակը մենք տեսնում

ենք, պաղ ջրով լիք բաժակը տաք սհնեակի մէջ զրած ժամանակ, այդ միջոցին բաժակի կողքերքին խսկոյն կերեին ջրային կաթիւներ: Այս մի և նոյն կերպովն է լինում և պատուհանների քրանելը, ելք որ դուրսը ցուրտ է, իսկ ներսը տաք:

Երկինքը ամպերով ծածկուած միջոցին ցողը շատ սակաւ է լինում, պատճառ՝ այդ ժամանակ ամպերը երկրից արձակուած տաքութիւնը անդրադարձնում են և այդպէսով պակսեցնում են երկրի պաղերը: Որ և իցէ ծածկոցի տակ եղած խոտի վերայ աւելի սակաւ ցող կիջնէ՝ քան թէ լիներ նաքաց երկնքի տակ: «Օառաւերի տակ եղած խոտերը աւելի քիչ են ծածկվում ցողով քան թէ արձակ տեղում: Յօղի քանակութիւնը դաշտումը աւելի շատ է լինում, քան թէ քաղաքի փողոցներումը, ուր տները ծածկում են երկնքի մեծ մասը: Այս իսկ պատճառովն է, որ ձմռան պարզ օրերին աւելի սատաիկ ցրտեր են լինում, քան թէ ամպոտ, երբ շատ անգամ աւելի տաք է լինում, քան ցուրտ: Քամին անհետացնում է ցողը, պատճառ՝ նա պարզ ու տաք օգերը իրար հետ է խառնում:

Յօղը ամենից աւելի այն մարմինների վերայ է պաղում՝ որոնք ընդունակութիւն ունին աւելի արագ արձակելու իրանցից տաքութիւնը: Այսպէս նա շատ քիչ է իջնում յղիուած մետաղների երեսին, բայց խիստ առատութեամբ է իջնում, բըթի, բմբլի, ապակու, փայտային փրշը ընդուների, խոտի և այլ այս տեսակ մարմինների վերայ: Բոյսերի վերայ աւելի շատ ցող է իջնում քան թէ պինտ երկրի վերայ: Փխրուն և աւաղուտ տեղերը ա-

ւելի շուտ և շատ են խոնաւանում, քան թէ կոխկրտած և ամուր տեղերը:

Գրաւետ տեղերը աւելի շատ ցող է իջնում քան թէ անջրդի: Անջրդի անսպատներումը ցող ամենուն չի էլ լինում: Շատերը կարծում են, թէ ցողի ջուրը վնասակար է բոյսերին և կենդանիներին. բայց այդ ճշմարիտ չէ. ցողի ջուրը չափազանց մաքուր է: Բայց քաղցր ցողը, կամ ինչպէս ասում են, մեղրացօղը, որ երեւում է բոյսերի վերայ, դա արդարե վնասակար է կենդանիներին, բայց այդ յառաջ է գալիս տհա ինչ պատճառից. — բոյսերի վերայ գոյացող բուսական որդունքները / բանցից քաղցրավուն հիւթ են արտաթորում՝ որ բաղադրվում է ցողը հետ:

Գարնանայինն և աշնանայինն պարզ և հանդարտ զիշերները երկրի մակերեսովը այնքան է պաղում՝ որ նորա բարեխառնութիւնը հասնումէ մինչև 0°, և այդ միջոցին եղած ցողը սառ չելով դառնում է եղեամն: Այս տեսակ սառնանալը չափազանց վնասակար է քնիուշ բոյսերին, և դորա համար պարտիզանները այդ տեսակ բոյսերը ծածկում կամ փաթաթում են խարով: Եղեամն շատ անգամ ձմռան էլ է լինում: Այդ այն ժամանակներն է լինում, երբ որ շարունակ քանի մի օր ցուրտ անելուց յետոց յանկարծ տաք և ջրային շողիներով լիքը քամի է փշում: Այդ շողիները պաղ ծառերին և շնութիւններին դիսչելով սառնանում են և աները ծածկում սպիտակ քօղով, իսկ ծառերը՝ գեղեցիկ ժապաւեններով:

Երբ որ օդը աւելի պաղ է քան թէ երկրի խոնաւ մակերեսովը, այդ ժամա-

նակ ջրաշողիները վեր բարձրանալով և պաղ օդին դիսկելով, փոխարկվում են ամենամանը կաթիլների։ Այդ կաթիլները իրարու հետ կցուելով ճանկում են օդի մասնիկներ և կազմում ջրային պրդպրջակներ կամ ասենք ջրարշտիկներ մեջքն օդով լիքը։ Այս ջրարշտիկները չափազանց մանը են, բայց որովհետեւ խիստ շատ են և ահազին քանակութեամբ պըարավում են պաղ օդի մեջ, այդ պատճառով դոքա դառնում են մեր աշաց համար նկատելի և մենք անուանում ենք նոշան ճշուց, մէտ, ճառախոսուց, խոսպա։ Այն բանը, որին մենք սովորաբար բուղ ենք անուանում կամ շաղք, դա ինքն է և մըշուշը։ Այդ մշուշը փոքր դիրքով մենք տեսնում ենք պաղ սենեւակում արտաշընէլիս, նոյն խոկ գորան էլ խիստ ցուրտ ժամանակները մեր արտաշընընթիւնը երեսում է մեզ, դորանով շատ անդամ փորձում էլ ենք, թէ աեսնենք որքան պաղութիւն կայ սենեւակի մեջ, պատճառ՝ որքան պաղ է օդը, այնքան աւելի է երեսում մեր արտաշընընթիւնից կազմուած մշուշը։ Յուրա օրերը երբ որ ասք սենեւակ մանելիս բաց ենք անում դուռը՝ խոկոյն կազմիում է մշուշ։ Չեն ժամանակ տաք վելիներից մշուշ է բարձրանում ծխիթ թանձրութեամբ, դոմերի դուներից նոյնպէս։

Ամենասասատիկ մշուշները լինում են աշունքը և ձմեռը։ Տարուայ այդ եղանակներին երկրի մակերեսոյթը աւելի տաք է լինում քան թէ օդը։ Վշուշները աւելի ջրաւետ աւեղերումն են ծագում, օրինակ գետերի և լճերի վերայ և ճահճուտ տեղերում։ Ամառը յօղ եղած միջոցնե-

րին մշուշ էլ է կազմվում, առաջ կազմվում է յօղ, յետոյ երբ որ օդը աւելի է պաղում՝ այդ միջոցին յօղերը մասամբ փոխարկվում են մշուշի։ Անջրդի տեղերումը միայն այն ժամանակի կարող է կազմվել մշուշ, երբ տաք եղանակին սաստիկ ցուրտ եղանակ կը յաջորդէ։

Խակ երբ որ ջրաշողիները կարողանում են ազատ վեր բարձրանալ և պաղել միայն երկրից շատ բարձր աւեղերում, նոքա այն տեղ ևս փոխարկվում են վերը յիշած կերպով ջրափշտիկների և այդ կերպարանափոխութեանը փոխանակի մշուշ ասելու՝ ասում ենք ամու։ Որանից կարելի է եղանակացնել, որ ամպ և մշուշ մի և նոյն բանն ասել է, այս երկոցունց մեջ այն զանազանութիւնը կայ միայն, որ ամպը երկրից բարձր աւեղերումն է պարագում, իսկ մշուշը նոյն խոկ երկրի երեսին։ Շատ լեռների գագաթներ ամպով պատած են լինում։ Եթէ կանգնենք այսպիսի լեռների ստորոտում՝ նոյն ամպերը թոյլ չեն տալ մեղ աեսնել սարի գագաթը, բայց հասնելով գագաթին, կտկսինք զանգատուիլ, որ թանձր մառախուղը թոյլ չէ տալիս մեզ աեսնել այդ սարերի շրջակայքը։

Ամպեր կարող են կազմվել նաև, երբ որ երկրից բարձր տեղուանք պաղ և խոնաւ օդը հանդիպի խոնաւ և տաք օդի։ Բայց ամպերն ինչու են լրղում օդի մեջ։ Երկրի մակերեսոյթից անդադար վեր են բարձրանում տաք ջրաշողիներ, որոնք և պահպանում են ամպերին։ Այս դիպուածումը մի և նոյն է յառաջ գալիս, ինչ որ աստցինք ծխի մասին, թէ բարձրացնում է իւր հետ ածուխի ամենամանը կը-

տորիիներ: Օդի խաղաղ ժամանակը՝ ամպերը ցածրանում են, պատճառ՝ բարձրացող շողիները նրանց չեն պահպանում: Եյլպիսի դիպուածներում շատ անգամ պատահում է, որ ամպերը ընկնում են տաք օդի խաւերի մէջ և կրկին ջրաշողիու փոխարկուելով անհետանում: Այս մի և նոյն պատճառովն է փոփոխվում և ամպերի ձեւերը, մի կողմից ամպերին կը շում են նորանոր բշտիկներ, միւս կողմից — նոքա փոխարկվում են ջրաշողիների: Ամպերը լինում են զանազան բարձրութեան: Աան ամպեր որ շատ բարձր չեն երկրից, կան որ մինչև 10 վերատ հեռաւորութեամբ բարձրանում են:

Երբ որ երկրի երեսից շատ ջրաշողիներ են բարձրանում, այնպէս որ զոլորշու բշտիկները շատ են ծանրանում և չեն կարողանում օդի մէջ լողալ, այդ լիցոցին դոքա սկսում են վերելից տեղալ մանրահատիկ ջրակաթիլներով: Եյս տեսակ ջրակաթիլների վայր տեղալուն մենք սովորաբար ստում ենք անչել: Երբ որ օդը խօնաւ է լինում և ստորին աստիճանի բարեխառնութիւն է ունենում, այդ ժամանակ տեղացող անձրեւի կաթիլները վայր իջնելիս ճանկում են շատ ջրաշողիներ և խոշորանում հետ զհետէ: Եյս կարող են ստուգել յետագայ փորձով: Մի բարձր շինութեան տանիքի վերայ գնենք մի արկղիկ, և մի և նոյն մեծութեան արկղիկ էլ գեանի վերայ գնենք, յետոյ տեսնենք ո՞ր արկղը աւելի շուտ կը լցուի ջրով: Մենք կը տեսնենք որ գետնին դըրած արկղիլը աւելի շուտ կը լցնուի: Եթէ կանգնենք մի բարձր սարի գալաթին, այն տեղ մենք կը շըջապատուինք մաս ա-

խուզով, սարից վայր իջնելիս կը թըռչուինք մանրահատ անձրելից, խոկ բոլորովին սարբոտումը մեզ վերայ կը տեղայ անձրեւը աւելի խոշոր — խոշոր կաթիլներով: Ուրա հակառակ, երբ որ օդը ցամաք է լինում՝ անձրեւի կաթիլների մեծութիւնը փոքր առ փոքր պակասում է, պատճառ՝ նոցա մակերեւութից յառաջ է գալիս շողիացութիւն:

Երբեմն պատահում է, որ օդի մէջ ամպ չի երեւում, բայց մի և նոյն ժամանակ անձրեւ է դալիս: Եյլ պատահում է այն ժամանակ, երբ որ պաղ օդը հանդիպում է տաք օդի հետ, այսպիսի զիսպուածներում ջրաշողիները ուղղակի դառնումն անձրեւի կաթիլներ և սկսում աեղալ:



Երբ որ ջրաշողիները բարձրանալով ընկնում են այնպիսի օդի մէջ՝ որի բարեխառնութեան աստիճանը զրոյից ցածր է, նոքա ստուգում են և կազմում են ըսպիտակ և զանազան ձերի փնջիկներ, որոց անուանում ենք Ֆեռն:

Ամսար փոթորիկների ժամանակ ուղում են ստուցի զնդակներ, որին ասում են հարիստու: Ուրնմն կարկուտ կազմուելու համար, հարկաւոր է, որ երկրից շատ բարձր տեղերումը խիստ ցածր բա-

բեխառնութիւն լինի, բայց թէ ինչ տեղ է գալիս այդ ցուրտը և ի՞նչպէս է կազմվում կարկուտը, զեռ մինչև այսօր ուսումնական մարդիքը լաւ չեն բացատրել այդ երեսիթը։ Կարկուտի հատիկները լինում են զանազան մեծութեան, — հասարակ սխառափ մեծութիւնից սկսեալ մինչև հաւի ձուի չափ կարկուտի հասեր են լինում և մինչև անգամ սորանից ել մեծ, այդ պատճառով կարկուտը շատ անգամ սարսափելի աւերմունքներ է անում ջարդելով բոյսերը երբեմն կենդանիներն եւս։

ԺԱ.

Մարդու լուսու ջրէ մէջ։

Եթէ բանալին ձգենք ջրով լցրած ամանի մջը, նա կանցնի ջրի տակիր, բայց եթէ փայտի կտոր ձգենք՝ կտսի երեսին լողալ։ Եհա այսպէս մենք տեսնում ենք, որ մարմիններից շատերը, երբ որ ձգում ենք ջուրը, տակ են անում և շատերը տակ չեն անում՝ այլ մնում են երեսին և լողում։ Բայց մարմինները երբ են տակ անում՝ ջրումը և երբ լողում նորա երեսին։

Աշռորդի մէկ նժարի մէջ դնենք մի բաժակ լիքը ջուր, իսկ միւս նժարի մէջ այնքան կշռաքար՝ որ երկոքին նժարների կը շեռը միեանց հաւասարին։ Եթէ առնենք բաժակը նժարից և ձգենք ջրի մէջ բանլիքը, նա իսկոյն կը կնկնի բաժակից վարդի մէկի մէջ, իսկ միւսումը այնքան կշռաքար, որ երկոքին նժարները հաւասարկռուին։ Յետոյ վեր առնենք շիշը և լցնենք ջրով, իսկ դատարի նժարի մէջ այնքան կշռաքար դընենք, ինչքան որ կայ միւսի մէջ, յետոյ արդ մի և նոյն քարերը տեղափոխենք միւսի մէջ, որով կատանենք շիշի ծանրութեան երկու անգամը։ Եթէ վերջապէս դատարի նժարի մէջ դնենք այժմ ջրով լիքը շիշը, կը տեսնենք, որ դա աւելի ծանր է քան թէ դատարի շիշի երկու անգամ ծանրութիւնը։ Ուրեմն ջրով լիքը

ըեմն եթէ բանլիքը իւր ծաւալի չափ ջրի հետ հաւասարակշիռ լինի, պէտք է որ այժմը ել այնքան կշռէ բաժակի բանլիքի հետ, ինչքան որ կշռեց առաջ առանց գորան, պատճառ՝ ինչպէս ասացինք, բաժակից ոչ ինչ չի պակասիլ, այլ միայն այնքան ջուր, ինչքան որ բանլիքի ծաւալնէ։ Փորձենք Բանլիքը մլջին բաժակը դնենք կշռորդի նժարի մէջ։ Մենք կը տեսնենք, որ բաժակը այժմ ծանր է առաջին անգամից։ Եյս ասել է թէ բանլիքը աւելի ծանր է քան թէ իւր ծաւալով չափ պակասած ջուրը։ Ուրեմն մարմինը այն ժամանակն է ջրի տակն անում, երբ որ իւր ծաւալով չափ ջրից ծանր է ինում։

Եթէ առնենք այժմ մի փոքրիկ շիշ, բերանը խցանով փակինք և յետոյ ձգենք ջրով լիքը բաժակի մէջ, շիշը կտսի լողալ ջրի երեսին։ Իսկ եթէ ընկղղմենք ջրի մէջ, նա նոյնպէս իւր ծաւալի չափով ջուր դուրս կը մղէ։ Եյտ ծաւալի գտնելը հեշտ է։ Կա փոքր ինչ աւելի կը լինէր այն ջրի ծաւալից՝ որ կը լցնէր շիշը։ Դատարի շիշը դնենք կշռորդի նժարներից մէկի մէջ, իսկ միւսումը այնքան կշռաքար, որ երկոքին նժարները հաւասարկռուին։ Յետոյ վեր առնենք շիշը և լցնենք ջրով, իսկ դատարի նժարի մէջ այնքան կշռաքար դընենք, ինչքան որ կայ միւսի մէջ, յետոյ արդ մի և նոյն քարերը տեղափոխենք միւսի մէջ, որով կատանենք շիշի ծանրութեան երկու անգամը։ Եթէ վերջապէս դատարի նժարի մէջ դնենք այժմ ջրով լիքը շիշը, կը տեսնենք, որ դա աւելի ծանր է քան թէ դատարի շիշի երկու անգամ ծանրութիւնը։ Ուրեմն ջրով լիքը

շիշը ծանրէ մի և նոյն չափը ունեցող դատարկ շիշեց շիշի մէջ եղած ջուրը նոյնպէս ծանրէ դատարկ շիշիցը։ Եւ որովհետեւ շիշի դուրս մղած ջրի ծաւալը նոյն իսկ համարեա թէ շիշի մէջ եղած ջրին հաւասար է, ուստի առանց կարծեաց մեր շիշը, որի մէջ միայն օդ կայ, աւելի թեթև կը լինի իւր դուրս մղած ջրից։ Աւրեմն մարմինը լողում է միայն այն ժամանակ, երբ որ ինքը աւելի թեթև է, քան թէ իւր դուրս մղած ջրի ծաւալը։

Իսայց եթէ մարմնի կշիռը հաւասար լինի իւր դուրս մղած հեղուկի ծաւալին, այն ժամանակ ի՞նչ կը լինի, կընկղմի՞ն նա հեղուկի մէջ, թէ՞ երեսին կը լողայ։ Երկաթէ մեխը ինքը միայնակ ընկղմվում է ջրի մէջ, անկէ խցանը լողում է ջրի երեսին։ Եթէ մեխը ցըցենք մի մեծ կտոր խցանի մէջ, նա խցանի հետ ի միասին կը լողայ ջրի երեսին և չեն ընկղմիլ։ Դոքա երկուքն ի միասին կարող են դուրս մղել այնքան ջուր, որի կշիռը աւելի ծանր կը լինի, քան թէ մենակ մեխի կամ մենակ խցանի դուրս մղածը։ Իսայց սկսենք այժմ մեխի հետ եղած խցանից քիչ քիչ կը տրատել և ամեն անգամ կտրելուց յետոյ, մնացածը մեխի հետ ի միասին ձգենք ջրի մէջ։ Մենք կը տեսնենք, որ ամեն մի մաս նորանից պակասացնելուց յետոյ, նա ըսկում է աւելի խոր ընկղմիլ ջրի մէջ։ Եթէ շարունակենք այսպէս կտրատել խցանից մի մի մաս և փոքրացնել նորա ծաւալը, վերջապէս կը հասցնենք նորան այն վիճակին, որ նա կսկսի լողալ ու թէ ջրի երեսին, այլ նոյն էակ զբուճը։ Եշա այդ միջացին այդ երկոքին մարմինները ի միասին այնքան ջուր են դուրս մղում,

որոյ կշիռը իւրեանց կշռին հաւասար է, և հենց պատճառն էլ այդ է, որ նոքա ու ընկնում են յատակի վերայ և ոչ երեսին մնում, այլ լողում են ջրի մէջին։ Յայտնի բան է, որ այս աստիճանին հասցնելուց յետոյ, եթէ էլի սկսենք խցանից մի կտոր պակասացնել, այնուհետեւ նա կընկղմի ջրի մէջ և կընկնի յատակի վերայ, պատճառ՝ այնուհետեւ նորա դուրս մղած ջրի կշիռը իւր կշռէն թեթև կլինի։

Իսայց զարմանալին այս է, որ ձոյլ երկաթի կտորը ընկղմում է ջրի մէջ, բայց եթէ այդ կտորը տափակացնելով շինենք մի մեծ արկղիկ, նա այլ ևս չի ընկղմիլ, այլ կը լողայ ջրի երեսին։ Եյս զարմանալի թուացող երկոյթի բացարելը շատ հեշտ է։ Զոյլ երկաթը՝ որի ծաւալը համարենք թէ հաւասար է մի խորանարդ ոտնաշափի, նա դուրս է մղում, ուրիմն և մի խորանարդ ոտնաշափ ջուր։ Եւ որովհետեւ այդքան ջուրը աւելի թեթև է քան թէ իւր չափով երկաթը, ապա պէտք է որ երկաթը ընկղմի ջրի մէջ։ Իսայց երբ որ այդ երկաթը տափակացնում թերթ ենք շինում և նորանից մի այնպիսի արկղ՝ որի ծաւալը, օրինակ, 10 անգամ մեծ է միաձոյլ կտորից, դա այդ ժամանակ 10 անգամ աւելի ջուր դուրս կը մղէ, և ջրի ծանրութիւնը անշուշտ աւելի կը լինի, քան թէ մի ոտնաշափ խորանարդ երկաթը, և այդ պատճառով յայտնի բան է, որ արկղիկը այդքան թեթև լինելով, պէտք է լողայ ջրի երեսին։ Եյս փորձի վերայ է հիմնած երկաթէ և զբահաւոր նաւերի լողալը։

Չուն որ ձգում ենք հասարակ ջրի մէջ, ընկղմում է, բայց եթէ ձգենք այն-

պիսի ջրի մէջ, որ յագեցած է աղով այս
ինքն եթէ աղի ջրի մէջ ձգենք, կոկոփ լո-
ղալ: Առա պատճառն այն է՝ որ աղի ջու-
րը ծանր է հասարակ ջրից: Առանից ե-
րեւում է որ թեթև հեղուկների մէջ մար-
մինները աւելի խօր են ընկղմում քան թէ
ծանր հեղուկների: Վ. յապէս կողնի փայտը
լողում է ջրի վերայ և ընկղմում իւղե
մէջ, պատճառ՝ իւղը թեթև է ջրից: Ար-
կաթը լողում է սնդիկի վերայ և ընկղ-
մում ջրի մէջ: «Նաւելը գետերի ջրե-
րումը աւելի խրն են նստում քան թէ
ծովի ջրերումը, պատճառ՝ ծովերի ջուրը
աղի լինելով աւելի ծանր են քան թէ
գետերի քաղցր ջուրը:

Մարդուս մարմինը աւելի թեթև է
քան թէ իւր ծաւալի չափով ջուրը,
պատճառ մարմնոյ մէջ շատ օդ կայ և նոյն
իւկ ճարպն էլ թեթև է ջրից, այդ պատ-
ճառով մարդս պէտք է, որ ընկղմի ջր-
ըրումը, բայց այս կայ, որ լողալու ժա-
մանակ նա հարկադրուած է զլուխը ուղիղ
բռնել ջրի վերայ, իսկ մարմինը ընկղմում
է ջրի մէջ, պատճառ՝ ջուրը մանելով նո-
րա մէջ արտաքսում է նորանից օդը և
ծանրացնում: Քամակի վերայ աւելի
հեշտ է լողալը, պատճառ՝ այդպէս դժուա-
րութիւն չի լինում շնչառութեան հա-
մար: Բայց ինչո՞ւ համար ջրում խեղ-
դուածը մի առժամանակ անցնելուց յե-
տոյ, ջրի երեսն է ընկնում և սկսում լո-
ղալ նորա վերայ: Կազզուածի դիակը ջրի
մէջ սկսում է նեխիլ, և այդ պատճառով
նորանում կաղմօւմ են շատ օդակերպ
մարմիններ, որոնցից դիակը ուռչում է և
աւելի մէծ տարածութիւն բռնելով ջրի
մէջ, ինքը թեթևանում և երեսն է ընկ-

նում: Բայց այդ միջոցին դիակի այն մաս
սունքները, որոնք լիքն են սդակերպ մար-
միններով, պայթում են և նրանց ծեղ-
քերով ջուր է թափանձում դիակի մէջ,
որով նա կրկին ժանրանումէ և ընկղմում
ջրի յատակը: Ը ան զլուխը այնպէս է շի-
նուած՝ որ լողալու ժամանակ չի ընկղմ-
վում ջրի մէջ, և դորա համար շունը
հեշտութեամբ է լողում: Ապդերը, բա-
ղերը և ելե մի քան ուրիշ թռչուններ
շատ հեշտութեամբ են լողում, նրանց
ուների ճանիկիրը իրաք հետ միացած են
բարակ մաշկով, և այդ պատճառով նրանք
լողալու ժամանակ իրանց ոսները զործ
են դնում որպէս թիակներ, զլիները
բարձր են բռնում, և մի և նոյն ժամա-
նակ նրանց փետուրները թաթախուած են
իւղով, դորա համար ջուր չի կպչում
վերաները: Զկների մէծ մասը իրանց փո-
րի մէջ փամփուշտ ունին օդով լիքը, որ
առջում է լողալու համար: Զուկը
իւր կամքով կարողանում է լայնացնել արդ
փամփուշտը և սխմել, այնպէս որ դորա-
նով մերժ մեծանում և մերժ փոքրա-
նում է ձկան ծաւալը, որով և կարողա-
նում են վար իջնել մինչև գետի յատակը
և վեր ենել մինչև նորա երեսն: Փամ-
փուշտը լայնացնելով: Զուկը թեթեա-
նում է, պատճառ՝ այդ ժամանակ թէ և
փամփուշտը աւելի շատ ջուր է մզում,
բայց նորա ծանրութիւնը իւր մզած ջրի
ծանրութիւնից քիչ է լինում այդ միջո-
ցին:

(Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ)

Դ. Զ. Ա. Պ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.